

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝
2016 թ. դեկտեմբերի 23-ին տեղի ունեցած թիվ 6 նիստի

ք. Երևան

23.12.2016 թ.

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 30-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

Նիստը նախագահում էր Խորհրդի նախագահ, ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը, քարտուղարում՝ Խորհրդի քարտուղար, Հայոց պատմության ամբիոնի ասիստենտ Մ. Մալխասյանը:

Ս. Սարգսյանը, բացելով Խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. 2015-2016 ուստարում ԵՊՀ գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ԵՊՀ ղեկավարի հաշվետվության ներկայացում և կատարողականի հաստատում:

Ձեկուցող՝ ԵՊՀ ղեկավար Ա. Սիմոնյան

2. 2016 թ. (հունվար-նոյեմբեր ամիսներ) ԵՊՀ եկամուտների և ծախսերի կատարողականի մասին հաղորդում:

Ձեկուցող՝ ԵՊՀ ղեկավար Ա. Սիմոնյան

3. 2017 ֆինանսական տարվա ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:

Ձեկուցող՝ ԵՊՀ ղեկավար Ա. Սիմոնյան

4. 2017 թ. ԵՊՀ կառուցվածքի հաստատում:

Ձեկուցող՝ ԵՊՀ ղեկավար Ա. Սիմոնյան

5. 2017 թ. ԵՊՀ հաստիքացուցակի հաստատում:

Ձեկուցող՝ ԵՊՀ ղեկավար Ա. Սիմոնյան

6. 2017 թ. ԵՊՀ ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձի ընտրություն:

Ձեկուցող՝ ԵՊՀ ղեկավար Ա. Սիմոնյան

7. Ընթացիկ հարցեր:

Խորհրդի անդամների կողմից օրակարգային այլ հարց չառաջարկվեց, և օրակարգը դրվեց քվեարկության. կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. 2015-2016 ուստարում ԵՊՀ գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ԵՊՀ ռեկտորի հաշվետվության ներկայացում և կատարողականի հաստատում: Անցնելով օրակարգային առաջին հարցին՝ Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը 2015-2016 ուսումնական տարում ԵՊՀ գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացման համար խոսքը տրամադրեց ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանին: Առաջարկվեց հաշվետվությունը ներկայացնել 20 րոպեի սահմաններում:

Ա. Սիմոնյանը ներկայացրեց ԵՊՀ ձեռքբերումներն ու բացթողումներն ուսումնական գործընթացի, գիտահետազոտական աշխատանքների, միջազգային համագործակցության, հրատարակչական գործունեության, հանրային կապերի, տեղեկատվական համակարգերի, սոցիալական քաղաքականության, ուսանողների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքների ոլորտներում: Ռեկտորն ընդգծեց, որ 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակում ԵՊՀ գործունեությունը կազմակերպվել և իրականացվել է ԵՊՀ զարգացման ռազմավարական նոր ծրագրով (2016-2020 թթ.) նախատեսված խնդիրներին ու նպատակներին համապատասխան: Ա. Սիմոնյանի վստահեցմամբ՝ բոլոր բնագավառներում իրականացված միջոցառումներն ու ծրագրերը կոչված են եղել խթանելու համալսարանի առաջընթացը, ապահովելու նրա մրցունակությունը ՀՀ-ում և միջազգային ասպարեզում: Ա. Սիմոնյանը շեշտեց, որ Մայր բուհը կատարելագործում է կրթական ծրագրերը՝ ձգտելով իրականացնել նորարարական ուսանողամետ ուսուցում: Բուհի ղեկավարության ուշադրության կենտրոնում են ուսանողի կրթական ձեռքբերումները և ուսումնառությունից բավարարվածությունը, ուստի ԵՊՀ-ն ուսանողի կարիքները դնում է իր ակադեմիական գործունեության և առհասարակ կրթական քաղաքականության հիմքում:

Հաշվի առնելով 2016 թ. ապրիլին Արցախյան հիմնախնդրի սրման փաստը՝ Ա. Սիմոնյանը հաշվետվության ներածական ներկայացումից հետո անդրադարձավ համազգային այդ խնդրի ուղղությամբ Մայր բուհի կատարած աշխատանքներին: Ապրիլյան պատերազմի օրերին համալսարանականների կողմից Արցախին ցուցաբերվել է շուրջ 5 մլն դրամի օգնություն, իսկ ԵՊՀ-ն նվիրաբերել է շուրջ 30 մլն դրամ ֆինանսական աջակցություն, առաջին անհրաժեշտության պարագաներ, սնունդ, վրաններ և այլն: ԵՊՀ-ն 2016 թ. հունիսի 1-ից իրականացնում է զոհված 24 զինծառայողի 56 անչափահաս երեխաներին օգնություն տրամադրելու ծրագիր: Ջոհված յուրաքանչյուր զինծառայողի ընտանիքի մեկ անչափահաս երեխային ամսական վճարվում է 40 հազար, իսկ նույն ընտանիքի յուրաքանչյուր հաջորդ երեխային՝ 20 հազար դրամ օգնություն: Այս ծրագրով դրամական օգնության ընդհանուր ծավալը տարեկան շուրջ 25 մլն դրամ է:

2015-2016 ուստարում ԵՊՀ առկա համակարգում կրթություն են ստացել 13564 սովորողներ, այդ թվում՝ բակալավրիատում՝ 11680, մագիստրատուրայում՝ 1757, ասպիրանտուրայում՝ 127: Հեռակա համակարգում կրթություն են ստացել 4488 սովորողներ,

այդ թվում՝ բակալավրիատում՝ 3255, մագիստրատուրայում՝ 948, ասպիրանտուրայում՝ 288: Հաշվետու ուստարում ԵՊՀ-ն տվել է բակալավրիատի՝ առկա համակարգով 3066 և հեռակա համակարգով 543, իսկ մագիստրատուրայի՝ համապատասխանաբար 1161 և 423 շրջանավարտներ:

2016-2017 ուստարում ԵՊՀ են դիմել ավագ դպրոցի 3318 շրջանավարտներ՝ 2015-2016 ուստարվանից 250-ով պակաս, ինչը հիմնականում պայմանավորված է ժողովրդագրական միտումներով: Դիմորդներից 2988-ն ընդունվել են: Զգալի աճ է արձանագրվել բնագիտական ֆակուլտետներում: Հեռակա ուսուցման համակարգում եղած 460 դիմորդներից ընդունվել են 386-ը: Առկա ուսուցմամբ մագիստրատուրա դիմած 1576 հոգուց ընդունվել են 1180-ը, հեռակա՝ 327-ը: Դիմորդների հետ տարվող աշխատանքների շրջանակներում կազմակերպվել է ամենամյա դպրոցական առարկայական օլիմպիադան, որն այս տարի առաջին անգամ երկու փուլով է անցկացվել: Ռեկտորի վստահեցմամբ՝ բնագիտական ուղղվածությամբ մասնագիտական կրթությանը նախապատրաստված դիմորդների հոսքը հնարավոր կլինի ավելի կանոնավոր դարձնել հանրապետության առաջատար ավագ դպրոցներից ու վարժարաններից հարցազրույցով ընդունելությունն օրենսդրորեն թույլատրելու պարագայում, ինչից կշահի ոչ միայն բուհական ընդունելությունը, այլև պետությունը:

Խոսելով պրոֆեսորադասախոսական կազմի մասին՝ ռեկտորը նշեց, որ 2015-2016 ուստարում ԵՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմը 1552 հոգի է, որից 1238-ը՝ հիմնական աշխատողներ: Ա. Սիմոնյանը շեշտեց, որ ներդրվել է դասախոսների վերապատրաստման նոր ծրագիր՝ կրեդիտային համակարգով և ակադեմիական բոլոր բաղադրիչներով: Ծրագրում հատուկ ուշադրություն է դարձվում անգլերենի իմացության բարելավմանը, ընդ որում՝ այլևս չի թույլատրվելու անգլերենի դասավանդումն այն մասնագետների կողմից, ովքեր ունեն Ը1 մակարդակից ցածր որակավորում:

Գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման գործում նկատվել է զգալի առաջընթաց: ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը և սովորողները հրատարակել են 111 մենագրություն, 38 դասագիրք, 160 ուսումնամեթոդական ձեռնարկ, 2072 գիտական հոդված, 434 թեզիս: Իրականացվել են 144 դրամաշնորհային ծրագրեր և արտասահմանյան դրամաշնորհներ՝ նախորդ ուստարվանից 25-ով ավելի: Ընդհանուր առմամբ՝ Մայր բուհը տալիս է ՀՀ գիտական արդյունքի շուրջ մեկ երրորդը:

Շարունակվել են լաբորատոր վերազինման աշխատանքները: Ֆիզիկատեխնիկական հետազոտությունների կենտրոնի համար լաբորատոր պայմաններ ստեղծելու նպատակով հիմնանորոգվել է շուրջ 200 մ² տարածք, ձեռք են բերվել շուրջ 40 մլն դրամի լաբորատոր սարքավորումներ: Համաաշխարհային բանկի աջակցությամբ ստեղծվող Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնի

համար վերանորոգվել է շուրջ 100 մ² տարածք, ձեռք են բերվել շուրջ 200 մլն դրամի սարքավորումներ և նյութեր: Ա. Սիմոնյանն առանձնահատուկ շեշտեց, որ լաբորատորիաների վերազինումը կատարվում է ՀՀ Նախագահի ծրագրի շրջանակներում: ԵՊՀ Ռեկտորը գոհունակությամբ նշեց, որ գիտամանկավարժական գործունեության ոլորտում արձանագրած հաջողությունների և վաստակի համար մի շարք համալսարանականներ հաշվետու ուստարում արժանացել են պետական պարգևների: «Մովսես Խորենացի» մեդալ է շնորհվել Վահան Բայբուրդյանին, իսկ բնական գիտությունների զարգացման բնագավառում ՀՀ Նախագահի մրցանակի են արժանացել Պողոս Վարդևանյանը, Վալերի Առաքելյանը, Արմեն Կարապետյանը և Գրիգորի Կարագուլյանը:

Շարունակվել է համագործակցությունն արտերկրի գիտակրթական կենտրոնների հետ: Կնքվել են միջբուհական գործընկերության 15 նոր պայմանագրեր: Իրականացվել են կրթական, գիտական, մշակութային համատեղ ծրագրեր, դասախոսների և սովորողների փոխայցելություններ: Իրականացվել են 616 գործուղումներ, ընդ որում՝ միայն գիտական ծրագրերով գործուղման են մեկնել 175 սովորողներ, ինչը վերջին տարիների լավագույն ցուցանիշն է: ԵՊՀ ուսանողները փայլուն են հանդես եկել միջազգային օլիմպիադաներում: Այսպես, միայն Բուլղարիայում տեղի ունեցած մաթեմատիկայի 23-րդ միջազգային ուսանողական օլիմպիադայում ԵՊՀ ուսանողները նվաճել են 2 ոսկե, 1 արծաթե և 1 բրոնզե մեդալներ՝ թիմային հաշվարկով ապահովելով 15-րդ հորիզոնականը Մայր բուհի համար:

Աշխատանքներ են տարվել ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ, բարելավվել է բուհի նյութատեխնիկական բազան, ձեռք են բերվել ժամանակակից սարքավորումներ: Շարունակվել են աշխատանքները տեղեկատվական համակարգերի, համակարգչային տեխնիկայի, ներհամալսարանական համակարգչային ցանցի սպասարկման, զարգացման և արդիականացման ուղղությամբ: Ռեկտորի հավաստմամբ՝ ԵՊՀ-ն չունի համացանցային հասանելիության խնդիր, քանի որ բոլոր մասնաշենքերում անխափան գործում է գերարագ ինտերնետ: Շարունակվում է աշխատակիցներին և ուսանողներին համալսարանական էլեկտրոնային փոստի հասցեների տրամադրման գործընթացը: Փաստացի գործում են ԵՊՀ էլեկտրոնային փոստի շուրջ 20 հազար հասցեներ:

Ռեկտորն իր հաշվետվության մեջ առանձնակի շեշտադրում կատարեց ուսանողական կառույցների աշխատանքներին՝ նշելով, որ Ուսանողական խորհուրդը կազմակերպել է շուրջ 530, իսկ Ուսանողական գիտական ընկերությունը՝ 416 միջոցառում: Ա. Սիմոնյանը կարևորեց հատկապես ուսանողական ծրագրերն Արցախում՝ նշելով, որ ամանորյա տոնախմբությունների համար նախատեսված բոլոր ծախսերն ուղղվել են Արցախի մանուկներին ամանորյա նվերներ տրամադրելու ուսանողական ծրագրին:

Ա. Սիմոնյանն անդրադարձավ նաև Իջևանի մասնաճյուղի գործունեությանը՝ շեշտելով, որ այն կարևոր դեր է կատարում սահմանամերձ մարզի երիտասարդությանը մասնագիտական կրթություն տրամադրելու և տեղում աշխատանքով ապահովելու գործում:

Անդրադառնալով ԵՊՀ սոցիալական քաղաքականությանը՝ ԵՊՀ ռեկտորը նշեց, որ ԵՊՀ վարչակազմի ու Արհեստակցական կազմակերպության ուշադրության կենտրոնում են եղել համալսարանի աշխատողների հանգստի, առողջության պահպանման և սոցիալական տարբեր խնդիրներ: Մայր բուհը նախաձեռնել է հիմնական աշխատակիցների համար նախատեսված բժշկական ապահովագրության ծրագիր, որն իրականացվելու է «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ընկերության միջոցով: Ռեկտորը խոստացավ ավելի մանրամասն անդրադառնալ նախաձեռնությանը օրակարգային երրորդ հարցի շրջանակներում, քանի որ ծրագիրն սկսելու է գործել 2017 թ. հունվարից:

Ա. Սիմոնյանը խոսեց նաև առկա բացթողումների և թերությունների մասին, որոնք շտկելու համար պետք է հետևողական աշխատանքներ իրականացնել:

Ամփոփելով իր հաշվետու զեկույցը՝ ԵՊՀ ռեկտորը նշեց, որ ավելի քան 26 հազար համալսարանների մեջ ԵՊՀ-ն բարելավել է իր միջազգային վարկանիշը 211 կետով՝ զբաղեցնելով 2299-րդ տեղն աշխարհում: Արձագանքելով Նախագահ Ս. Սարգսյանի հարցադրմանը, թե պետք է դիտարկել բուհի վարկանիշը նախևառաջ տարածաշրջանային համատեքստում, Ա. Սիմոնյանը նշեց, որ ԵՊՀ-ն իր վարկանիշով գերազանցում է Ադրբեջանի բոլոր բուհերին և զիջում է միայն Վրաստանի երկու բուհերի՝ Թբիլիսիի պետական համալսարանին և Թբիլիսիի Իլյա համալսարանին, ընդ որում՝ վերջինս կիսամյակը մեկ թարմացվող վարկանիշային աղյուսակում ոչ միշտ է առաջ լինում ԵՊՀ-ից:

Ռեկտորի հաշվետվության ավարտից հետո Նախագահ Ս. Սարգսյանը զեկուցողին հարցեր ուղղելու հնարավորություն տվեց Խորհրդի անդամներին:

ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Գ. Հաջյանը հետաքրքրվեց բժշկական ապահովագրության ծրագրով նախատեսված ծառայությունների գումարի չափով: ԵՊՀ ռեկտորը պատասխանեց, որ ծառայությունները նախատեսված են առավելագույնը 6 մլն դրամի սահմաններում:

Այնուհետև պրոֆեսոր Գ. Հաջյանը մտահոգություն հայտնեց օտար լեզվի իմացության պահանջի խստացման շուրջ՝ նշելով, որ ճիշտ չէ անգլերենից թերացող մասնագետին դասավանդելու իրավունքից զրկելը: Ի պատասխան հնչած մտահոգությանը՝ Նախագահ Ս. Սարգսյանը նշեց, որ նախևառաջ պետք է դասավանդեն մարդիկ, ովքեր ծանոթ են իրենց մասնագիտական ոլորտի միջազգային ձեռքբերումներին, իսկ Ա. Սիմոնյանը հավելեց, որ դասավանդելու իրավունքից զրկումը սպառնում է միայն օտար լեզուների այն մասնագետներին, ովքեր չունեն լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակը: Այլ առարկաներ դասավանդողների համար բավարար է անգլերենի՝ առնվազն B1 մակար-

դակի իմացությունը: Բացի այդ՝ պրոֆեսորադասախոսական կազմի՝ օտար լեզվի իմացության բարելավումն ապահելու համար ԵՊՀ-ում գործում է եռամյա ուսուցման անվճար ծրագիր: Որպես այդ ծրագրի համակարգման մասնակից՝ ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ. Ապրեսյանը ձայնի իրավունք խնդրեց և նշեց, որ օտար լեզուների իմացությունը պարտադիր է՝ արտերկրում ՀՀ գիտական պոտենցիալը ներկայացնելու համար: Պրոֆեսոր Գ. Հաջյանն իր մտահոգությունը շարունակեց նաև համալսարանականների շրջանում ռուսերենի իմացության անհրաժեշտության մատնանշմամբ: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը եզրափակեց հարցի քննարկումն այն դիտարկմամբ, որ ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը պետք է առնվազն բավարար մակարդակով տիրապետի անգլերենին և ռուսերենին:

Այլ հարցեր չհնչեցին: Ելույթ ունենալու համար ձայնի իրավունք խնդրեց ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչ Ն. Հարությունյանը: Նա վստահեցրեց, որ կառավարման տեսության մեջ հաշվետվությունները պետք է լինեն պատճառահետևանքային կապով հիմնավորված, կազմակերպված և համոզիչ՝ միաժամանակ պարունակելով որոշակի ինքնաքննադատություն: Քանի որ այդ ամենն առկա էին ռեկտորի հաշվետու զեկույցում, Ն. Հարությունյանն առաջարկեց ներկայացված հաշվետվության հիման ԵՊՀ 2015-2016 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

Այլ գնահատականներ չհնչեցին, և Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց հաստատել ռեկտորի հաշվետվությունը և ԵՊՀ գործունեությունը 2015-2016 ուստարում գնահատել բավարար: Առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 3-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 3-րդ ենթակետով, լսելով 2015-2016 ուսումնական տարում ԵՊՀ գործունեության վերաբերյալ ռեկտոր Ա. Սիմոնյանի հաշվետվությունը՝

- 1) Հավանություն տալ 2015-2016 ուսումնական տարվա ընթացքում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
- 2) Հավանություն տալ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակում նախատեսված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
- 3) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2015-2016 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

2. 2016 թ. (հունվար-նոյեմբեր ամիսներ) ԵՊՀ եկամուտների և ծախսերի կատարողականի մասին հաղորդում: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը հիշեցրեց, որ, համաձայն «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետի, ԵՊՀ կանոնադրության 22-րդ կետի 2-րդ, 42-րդ կետի 7-րդ ենթակետերի և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 16-րդ ենթակետի, Խորհուրդը պետք է հաստատի ոչ թե 11 ամսվա, այլ ֆինանսական ողջ տարվա հաշվետվությունը, ուստի այն Խորհրդի հաստատմանը կներկայացվի մի քանի ամիս անց:

Ռեկտորը ներկայացրեց ԵՊՀ եկամուտների և ծախսերի կատարողականը, ըստ որի՝ 2016 թ. նախահաշվի կատարողականը տասնմեկամսյակի դրությամբ պրոֆիցիտային է՝ կազմելով 415 մլն 664 հազար դրամ (4%): Եկամուտները նախատեսվածի նկատմամբ հավաքագրվել են 94%-ով:

Ուսման վարձավճարներից եկամուտների կատարողականը կազմել է 92%: Միջին ուսման վարձի չափը 2016 թ. կազմել է 438 հազար դրամ՝ վճարովի համակարգում սովորող 14650 ուսանողների միջին տարեկան հաշվարկով:

3120 ուսանողների մասնակի գեղչվել է ուսման վարձը: Ջեղչերի ընդհանուր ծավալը կազմել է 394 մլն 250 հազար դրամ, այսինքն՝ մեկ ուսանողի հաշվով՝ տարեկան միջինը 126 հազար դրամ: Սա ԵՊՀ-ում երբևէ գրանցված ամենամեծ ցուցանիշն է:

Պետական ֆինանսավորումը նախատեսվածի նկատմամբ կատարվել է 92%-ով: Մեկ ուսանողի համար պետական նպաստը նախատեսված 633 հազար դրամի փոխարեն ֆինանսավորվել է 648.4 հազար դրամով: Պետական ֆինանսավորմամբ ԵՊՀ-ում սովորում են միջին տարեկան 2490 ուսանողներ, որոնցից 130-ը՝ հետբուհական մասնագիտական կրթությամբ: Մեկ ուսանողի հաշվով ուսման վարձի փոխհատուցումը պետք ունի գերազանցում է ԵՊՀ-ում սահմանված ուսման վարձավճարները բոլոր մասնագիտություններով՝ բացառությամբ «իրավագիտություն» մասնագիտության:

Ավելացել է նաև սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձի մասնակի և արտոնություն ունեցող ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցման պետական ֆինանսավորումը՝ կազմելով համապատասխանաբար 160 մլն և 71 մլն դրամ:

Գիտական և գիտատեխնիկական ծրագրերով պետական ֆինանսավորումն աճել է գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրամադրվող հավելավճարների ծրագրով:

Պետական ֆինանսավորման ծավալը ընդհանուր եկամուտներում կազմել է 25.4%, որից կրթական ծրագրերի մասով՝ 17.4%, իսկ գիտական ծրագրերով՝ 8%:

Ձեռնարկատիրական այլ եկամուտների գծով կատարողականը կազմել է 82%: Այս հոդվածում նախատեսված եկամուտներն արդեն հավաքագրվել են լրացուցիչ կրթական ծրագրերով:

Ոչ գործառնական եկամուտներն աճել են 7.8%-ով, ինչը պայմանավորված է Արդ-
շինքանկի կողմից վճարվող ավանդային տոկոսավճարներով:

Բարեգործական եկամուտների գերակատարումը պայմանավորված է Իզմիրյան
հիմնադրամի կողմից ԵՊՀ գրադարանի պահպանման համար նվիրաբերված 8.4 մլն
դրամ գումարով:

Ծախսերի կատարողականը նախատեսվածի նկատմամբ կազմել է 90%: Աշխատա-
վարձի վճարումները կատարվել են 92%-ով՝ կազմելով ընդհանուր ծախսի 61%-ը: Աշխա-
տակիցների միջին ամսական թիվը կազմել է 2737: Մեկ աշխատակցի հաշվարկով միջին
ամսական աշխատավարձը, ներառյալ հարկերը, կազմել է 196.3 հազար դրամ, իսկ նվա-
զագույն ամսական աշխատավարձը՝ 80 հազար դրամ:

Ծախսերը նախահաշվի ցուցանիշները գերազանցել են մի քանի հոդվածներով: Պե-
տական բյուջե վճարումների գերածախսը պայմանավորված է ԵՊՀ հյուրերի տան վա-
ճառքից վճարված շահութահարկով: Բացի այդ, ըստ շահութահարկի մասին ՀՀ օրենքի,
կազմակերպությունները պարտավոր են նախորդ տարվա շահութահարկի 75%-ի չափով
կանխավճար մուծել:

Գերակատարվել է բարեգործական ծախսեր ենթահոդվածի ցուցանիշը, քանի որ,
ինչպես արդեն նշվել է, Ապրիլյան պատերազմի ժամանակ ԵՊՀ ղեկավարության և աշ-
խատակիցների կողմից ցուցաբերվել է ֆինանսական և նյութական մեծ աջակցություն,
որը բնականաբար չէր կարող նախատեսված լինել նախահաշվով: Ավելին, պատերազմի
ընթացքում զոհված զինծառայողների երեխաներին ցուցաբերվել է ամենամսյա ֆինան-
սական հավելյալ աջակցություն: ԵՊՀ-ն զգալի միջոցներ է ներդրել նաև ԼՂՀ գորգագոր-
ծության զարգացման ծրագրին:

Տարվա ընթացքում նախատեսված միջոցառումների կատարողականը 11 ամսում
կազմել է 75%: Ֆակուլտետներին և վարչական ստորաբաժանումներին հատկացվող մի-
ջոցների կատարողականը համապատասխանաբար 91% և 62% է:

Մեկ մարդու հաշվարկով (աշխատակիցներ՝ 2737, ուսանողներ՝ 17140 մարդ) միջին
ծախսը 2016 թ. հունվար-նոյեմբեր ամիսներին կազմել է 504 հազար դրամ: Դրամական
միջոցների մնացորդը 2016 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ 3 մլրդ 179 մլն 837 հազար
դրամ է:

2016 թ. հունվար-նոյեմբեր ամիսների ԵՊՀ եկամուտների և ծախսերի կատարողա-
կանի մասին հարցեր չհնչեցին, և Նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց, ի գիտություն
ընդունելով եկամուտների և ծախսերի կատարողականի վերաբերյալ ռեկտորի հաղոր-
դումը, օրակարգային հաջորդ հարցը ներկայացնելու համար ևս խոսքը տրամադրել Ա.
Սիմոնյանին:

3. 2017 ֆինանսական տարվա ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում: Ա. Սիմոնյանը, ներկայացնելով 2017 թ. ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշիվը, շեշտեց, որ այն հավասարակշռված է և կազմում է 10 մլրդ 172 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այն նվազել է 928 մլն դրամով կամ 8.4%-ով, ինչը պայմանավորված է 2016 թ. բյուջեում հաստատագրված ԵՊՀ հյուրերի տան վաճառքից ստացված դրամական միջոցների նպատակային սպառմամբ: Մնացած հոդվածներում ևս առկա են որոշ փոփոխություններ: Ուսման վարձավճարներից ստացվող եկամուտները 52 մլն դրամով ավելին են նախատեսված, քանի որ 2016-2017 ուստարվա մեկնարկից ուսման վարձերը բարձրացել են 8%-ով, և, բացի այդ, մագիստրատուրա ընդունված ուսանողների թիվը գերազանցում է շրջանավարտների թվին: Այս հոդվածով եկամուտները կազմելու են ընդհանուր եկամուտների 63.2%-ը: Ընդհանուր առմամբ՝ վճարովի համակարգում սովորողների միջին տարեկան թիվը հաշվարկված է 16 հազար:

Հաշվի առնելով 2015-2016 ուստարվա ցուցանիշները և օրենսդրական պահանջները՝ նախատեսված է, որ կատարվելու է վճարովի համակարգով սովորող ուսանողների ուսման վարձավճարների՝ ընդհանուր շուրջ 400 մլն դրամ ծավալով մասնակի կամ լրիվ փոխհատուցում:

Ռեկտորը կարևորեց, որ պետական ֆինանսավորումը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով աճելու է ի հաշիվ մեկ ուսանողին տրամադրվող նպաստի ավելացման: Հաշվետու տարում տրամադրված 633 հազար դրամի փոխարեն պետպատվերով սովորող մեկ ուսանողին տրվող նպաստը 2017 թ. նախատեսված է 648.4 հազար դրամ: Պետական ֆինանսավորմամբ ԵՊՀ-ում սովորողների միջին տարեկան թիվը, ներառյալ Իջևանի մասնաճյուղը, կազմելու է 2500 մարդ:

Գիտական և գիտատեխնիկական ծրագրերով պետական ֆինանսավորումը ևս ավելանալու է, մասնավորապես՝ աճելու են գիտական աստիճանների, ինչպես նաև բարձր արդյունավետության համար գիտաշխատողներին տրվող հավելավճարները:

Ընդհանուր առմամբ՝ պետական բյուջեից ֆինանսավորումը կազմելու է ընդհանուր եկամուտների 30%-ը (կրթություն՝ 20%, գիտություն՝ 10%): Հարկերի տեսքով պետբյուջե վճարվելու է ԵՊՀ եկամուտների 20%-ը:

2016 թ. շահագործման է հանձնվել ԵՊՀ հյուրերի տունը, ուստի ձեռնարկատիրական այլ եկամուտների գծով ավելանալու են նրա ծառայությունից ակնկալվող եկամուտները՝ կազմելով տարեկան ընդամենը 10 մլն դրամ, քանի որ նախատեսվում է ԵՊՀ հրավիրյալ հյուրերի և դասախոսների համար այն անվճար շահագործել:

Դրամաշնորհային ծրագրերով նախատեսված եկամուտները նվազելու են, քանի որ խոշոր ծրագրերի ֆինանսավորումը կատարվել է 2016 թ., իսկ ծախսերը պետք է կա-

տարվեն 2017 թ.: Օրինակ՝ «Tempus Picassa» ծրագրով 300 հազար եվրո ֆինանսավորումը ստացվել է 2016 թ. նոյեմբերին, իսկ ծախսերը նախատեսված են 2017 թ.:

Անցնելով 2017 թ. նախահաշվում ամրագրված ծախսերին՝ ռեկտորը նշեց, որ աշխատավարձի համար նախատեսված ծախսերը կազմում են ընդհանուրի 66.2%-ը: ԵՊՀ-ում հիմնական հաստիքային աշխատավարձից բացի վճարվելու է նաև 240 մլն դրամ ընդհանուր ծավալով տարբերակված աշխատավարձ դասախոսական կազմին: 2016 թ. սեպտեմբերի 1-ից նախատեսված է դասախոսական անձնակազմի աշխատավարձի յուրաքանչյուր դրույքի՝ 10 հազար դրամով բարձրացում, որի համար մինչև դեկտեմբերի 31-ը հաշվարկված է 48 մլն դրամ, ինչին զուգահեռ գիտակրթական գործունեության համար լրավճարների ընդհանուր ծավալը կկազմի 72 մլն դրամ:

Հեռակա ուսուցման եկամուտների հաշվին նախատեսված է 355 մլն դրամ հավելավճարների տրամադրում: Ժամավճարի տեսքով վարձատրվող դասախոսական աշխատավարձերը կկազմեն 150 մլն դրամ: Հաշմանդանության կարգ ունեցող աշխատակիցներին տրամադրվելու է 12 մլն դրամ ընդհանուր ծավալով հավելավճար:

Մայր բուհը շարունակելու է երիտասարդ աշխատողների աշխատավարձի 5%-ը կազմող սոցիալական վճարների փոխհատուցման ծրագիրը՝ դրա համար նախատեսելով 115 մլն դրամ:

Պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական և դրամաշնորհային այլ ծրագրերի տարեկան շրջանառությունը գերազանցելու է 1.3 մլրդ դրամը, որի շուրջ 84%-ն ուղղվելու է աշխատավարձի վճարումներին:

Խրախուսման և ֆինանսական աջակցության համար նախատեսված է 20 մլն դրամ: ԵՊՀ հիմնական աշխատակիցներին տրվելու է ամենամյա տարեվերջյան պարգևատրում (13-րդ աշխատավարձ)՝ 280 մլն դրամ ընդհանուր ծավալով:

Կրթաթոշակի գծով ծախսերում ավելացվել է գերազանցությամբ սովորող ուսանողներին խրախուսելու նոր հոդված՝ յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի համար միանվագ 50 հազար դրամի չափով կրթաթոշակի տեսքով, որի ուղղությամբ ընդհանուր ծախսը նախատեսված է 20 մլն դրամ: Բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողներին տրվող անվանական կրթաթոշակների համար նախատեսված ծախսը ևս ավելացվել է:

Պետական բյուջե կատարվելիք վճարումների հոդվածում ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) նվազումը պայմանավորված է նրանով, որ մարզահամալիրի հիմնանորոգման և հյուրերի տան կառուցման համար շինարարական կազմակերպությանը 2016 թ. վճարված գումարներում արդեն իսկ ներառված էր նաև ԱԱՀ-ը:

Թեև կոմունալ վճարների սակագները նվազել են, սակայն այս հոդվածում կրճատում չի նախատեսվում, քանի որ կառուցվել է նոր կաթսայատուն, որը սպասարկելու է

մարզահամալիրը և հյուրերի տունը: Նվազել են ինտերնետի և հեռախոսակապի ծախսերը՝ հաշվի առնելով օպերատորների կողմից առաջարկվող սակագների իջեցումը:

Ապրանքանյութական պաշարների գծով նախատեսված ծախսերը ավելացել են, քանի որ հիմնանորոգված մարզահամալիրի համար գնվելու է մարզական գույք, իսկ ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված օպտիկամանրաթելային, լարային և անլար ներքին ինտերնետ ցանցը զարգացնելու և կապուղիների թողունակությունը մեծացնելու նպատակով ձեռք են բերվելու մալուխներ: Մարզահամալիրի և հյուրերի տան շահագործման պատճառով ավելացվել են նաև սանմաքրման և անվտանգության պահպանման ծառայությունների համար նախատեսված գումարները:

Ուսումնական պրակտիկայի կազմակերպման համար ավելացվել են տրանսպորտային միջոցների վարձակալության համար նախատեսված ծախսերը:

Ա. Սիմոնյանն առանձնահատուկ շեշտեց, որ ծառայությունների ձեռքբերման հողվածում ավելացվել է նոր ենթահողված՝ «Աշխատողների առողջության ապահովագրության ծրագիր», որի շրջանակում ԵՊՀ շուրջ 2400 հիմնական աշխատակիցների համար նախատեսված է 125 մլն դրամ: Ծրագիրն իրականացվելու է ի հաշիվ 2016-2017 ուստարում ուսման վարձավճարների բարձրացման արդյունքում ձևավորվող եկամուտների: ԵՊՀ-ն յուրաքանչյուր աշխատակցի համար տարեկան վճարելու է 52 հազար դրամ, իսկ ապահովագրական ծածկույթը կազմելու է մինչև 6 մլն դրամ: Հաշվի են առնված կլինիկական, վիրաբուժական, ատամնաբուժական և բժշկական այլ ծառայություններ՝ բացառությամբ խրոնիկ հիվանդությունների հետ կապված առողջական խնդիրների: Ծրագրի իրականացման համար հայտ են ներկայացրել 3 ընկերություններ, որոնցից մատչելի են եղել «Ռոսգոսստրախ-Արմենիա» ընկերության առաջարկած պայմանները:

Հաշվի առնելով 2016 թ. Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Մաթեմատիկայի և մեխանիկայի, Իրավագիտության ֆակուլտետների ուսանողների աննախադեպ հաջողությունները՝ գործուղման ծախսերում ավելացվել են միջազգային օլիմպիադաներին մասնակցելու համար հաշվարկված ծախսերը:

ԵՊՀ ղեկավարությունը նախատեսել է շարունակել Ապրիլյան պատերազմում զոհված զինծառայողների երեխաներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու ծրագիրը, որի նպատակով «Այլ ծախսեր» հոդվածում հաշվարկվել է հավելյալ 25 մլն դրամ:

Ռիսկերի կառավարման նպատակով նախատեսվել է պահուստային կապիտալի ավելացում 20 մլն դրամով: Պահուստային ֆոնդը նախահաշվով չնախատեսված, սակայն տվյալ իրավիճակում խիստ անհրաժեշտ համարվող ծախսերի համար է:

Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման հողվածով ավելացվել են լաբորատորիաների, դահլիճների, լսարանների տեխնիկական հագեցվածությունն ապահովելու համար համակարգիչների, լաբորատոր սարքավորումների, կահույքի և կենցաղային գույքի

ծեռքբերման գումարները: Դրանք նախատեսված են ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի ժամանակացույց-պլանով: Գրադարանի, լաբորատորիաների, դահլիճների և լսարանների նորոգման ծախսերը ևս նախատեսված են այդ ժամանակացույցով:

Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը հետաքրքրվեց՝ արդյոք 2017 թ. բյուջեում նախատեսված են հիմնանորոգման աշխատանքներ ԵՊՀ Դիլիջանի մարզաառողջարանային համալիրում: Ի պատասխան՝ ԵՊՀ ռեկտորը նշեց, որ դրա համար նախատեսված առանձին կետ բյուջեում ամրագրված չէ, սակայն վերանորոգման աշխատանքների համար նախատեսված գումարներից հնարավոր է այդ նպատակով որոշ միջոցներ առանձնացնել: Ռեկտորի հավաստմամբ՝ լրացուցիչ միջոցների առկայության դեպքում ձեռնամուխ կլինեն համալիրի նորոգմանը և ուսանողական հանրակացարանի կառուցմանը:

Այլ հարցեր չհնչեցին, ուստի նախահաշիվը դրվեց քվեարկության. կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 7-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 7-րդ ենթակետով, լսելով ռեկտոր Ա. Սիմոնյանի զեկուցումը Երևանի պետական համալսարանի 2017 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի վերաբերյալ՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2017 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ռեկտորին 2017 թվականի ծախսերը կատարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2017 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվին համապատասխան:

4. 2017 թ. ԵՊՀ կառուցվածքի հաստատում: Օրակարգի 4-րդ հարցը ներկայացնելիս ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը հիշեցրեց, որ ԵՊՀ-ում գործում են 19 ֆակուլտետներ, համահամալսարանական և ֆակուլտետային ենթակայության 2-ական ինստիտուտներ, 1 մասնաճյուղ, 105 ամբիոններ և կառուցվածքային այլ ստորաբաժանումներ: Գիտական խորհուրդը ԵՊՀ կառուցվածքում նոր ստորաբաժանումների ստեղծման, գործող մի քանի ստորաբաժանումների լուծարման և վերակազմակերպման միջնորդություններ է քննարկել: Հաշվի առնելով ֆարմացիայի զարգացման միջազգային միտումները՝ առաջարկվում է Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետը վերակազմակերպել «Քիմիայի ֆակուլտետ» և «Ֆարմացիայի ինստիտուտ» առանձին կառուցվածքային ստորաբաժանումների՝ ամբիոնային և լաբորատոր համապատասխան վերաբաժանմամբ: Նորաստեղծ ինստիտու-

տում համադրվելու են ուսումնական գործընթացը, գիտահետազոտական աշխատանքները և նորարարությունը, ինչին նպաստելու է նաև գործընկեր Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանը: Ըստ ռեկտորի՝ սա ԵՊՀ-ում կրթության և նորարարության համադրմանն ուղղված գերազանցության կենտրոնների և ինստիտուտների ստեղծման քաղաքականության կարևոր քայլերից մեկն է:

Կառուցվածքային մյուս փոփոխություններից Ա. Սիմոնյանը մատնանշեց Ֆիզիկայի ֆակուլտետում «Ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտ», Ռադիոֆիզիկայի ֆակուլտետում «Նանոպլազմոնիկայի գիտահետազոտական լաբորատորիա», Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում «Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոն», համահամալսարանական «Տիեզերական տեխնոլոգիաների և ծառայությունների գիտակրթական կենտրոն» և «Ֆիզիկատեխնիկական հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծումը:

Հարցեր չհնչեցին, և Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց քվերակությամբ հաստատել ԵՊՀ կառուցվածքը. կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով՝ հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2017 թվականի կառուցվածքը՝ համաձայն հավելվածի:

5. 2017 թ. ԵՊՀ հաստիքացուցակի հաստատում: Խոսելով հաստիքացուցակի մասին՝ Ա. Սիմոնյանը զեկուցեց, որ բոլոր ստորաբաժանումների հաստիքների ընդհանուր թիվը 2774.25 դրույք է, որից պրոֆեսորադասախոսական կազմինը՝ 1105.5, գիտական անձնակազմինը՝ 503, վարչակազմինը՝ 198, ուսումնաօժանդակ անձնակազմինը՝ 324.75, սպասարկող անձնակազմինը՝ 178.5, Իջևանի մասնաճյուղինը՝ 215.75 դրույք: Տրվելու են նաև տարբերակված հավելավճարներ, ժամավճարային հիմունքով դասախոսական աշխատանքի վարձատրություն, տարեկան մեկ անգամ՝ դեկտեմբերին, աշխատավարձի դրույքի չափով պարզատրում հիմնական աշխատակիցներին և այլն:

Հաստիքային միավորների աճ է նկատվում գիտական անձնակազմի մասով, սակայն նվազման միտում կա ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմերում:

2017 թ. հաստիքացուցակով նախատեսված ծախսերի ընդհանուր չափը 6 մլրդ 730.5 մլն դրամ է, որից 4.2 մլրդ դրամը տարեկան հաստիքային աշխատավարձն է:

Քանի որ հարցեր չհնչեցին, Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց հաստատել ԵՊՀ հաստիքացուցակը. կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 6-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 6-րդ ենթակետով՝ հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2017 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

6. 2017 թ. ԵՊՀ ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձի ընտրություն: ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանն օրակարգի այս հարցը ներկայացնելու համար խնդրեց խոսքը փոխանցել Խորհրդի քարտուղար Մ. Մալխասյանին: Վերջինս ներկայացրեց, որ ԵՊՀ 2017 թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձի ընտրության մրցույթին մասնակցելու համար հայտ են ներկայացրել 3 ընկերություններ՝ «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ (ծառայությունների ընդհանուր գումարը՝ 16.2 մլն դրամ), «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ (14 մլն դրամ), «ՍՕՍ-Աուդիտ» ՍՊԸ (15.7 մլն դրամ), որոնցից ամենացածր գինը, փաստորեն, առաջարկում է «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ն, որը 2016 թ. ԵՊՀ ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձն է:

Հիմք ընդունելով ընկերությունների կողմից ներկայացված պայմանները՝ Խորհրդի նախագահն առաջարկվեց աուդիտ իրականացնելու համար ընտրել առավել ցածր գին ներկայացնող ընկերությանը: Այլ առաջարկներ չեղան, և Նախագահ Ս. Սարգսյանը հարցը դրեց քվեարկության. կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 13-րդ կետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 9-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 9-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2017 թվականի ֆինանսատնտեսական գործունեության և ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձ ընտրել «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ին և սահմանել աուդիտ իրականացնող անձի հետևյալ գործառույթները.

ա) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2017 թ. համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացում և անկախ աուդիտորական եզրակացության ներկայացում:

բ) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի եկամուտների ու ծախսերի 2017 թ. տարեկան նախահաշվի և դրա փոփոխությունների կատարողական հաշվետվության աուդիտի իրականացում և անկախ աուդիտորական եզրակացության ներկայացում:

7. Ընթացիկ հարցեր: Ընթացիկ հարցերի քննարկման շրջանակներում ելույթ ունեցավ Խորհրդի անդամ, ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ուսանողուհի Աստղիկ Մնացականյանը՝ Խորհրդի անդամների ուշադրությունը հրավիրելով այն փաստի վրա, որ, թեև Խորհրդի նախորդ նիստերում բարձրացվել է ԵՊՀ մոտակայքում կուրսային ու ավարտական աշխատանքներ առաջարկող կրպակների գործունեության կասեցման հարցը, սակայն դրանք շարունակում են գործել: Խորհրդի անդամ Հ. Հովսեփյանը հարցի առնչությամբ նշեց, որ խնդիրն ուսումնասիրվել է, սակայն իրավական տեսանկյունից պատկան մարմիններն իրավասու չեն նրանց գործունեությունը դադարեցնել: Խորհրդի անդամ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի փոխնախարար Ա. Քարամյանն էլ հավելեց, որ անհրաժեշտ է աշխատանքներ տանել այդ պատվերների պահանջարկը վերացնելու ուղղությամբ: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց լրացուցիչ զբաղվել խնդրով և անհրաժեշտ պայմաններ ստեղծել ուսանողների ակադեմիական ազնվության ապահովման համար:

Այնուհետև ելույթ ունեցավ Խորհրդի անդամ պրոֆեսոր Գ. Հաջյանը՝ շնորհակալություն հայտնելով ռեկտոր Ա. Սիմոնյանին՝ մարզահամալիրի հիմնանորոգման, նոր հյուրատան կառուցման և բանակին ցուցաբերած աջակցության համար:

Խորհրդի անդամ, ՀՀ պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը մտահոգություն հայտնեց այն փաստի առնչությամբ, որ ԵՊՀ-ում զգալի թիվ են կազմում հատկապես Ռոմանագերմանական բանասիրության և Միջազգային հարաբերությունների ֆակուլտետների ուսանողները, մինչդեռ նրանց առաջնային առավելությունը միայն օտար լեզվի իմացությունն է: Նրա համոզմամբ՝ պետք է ուշադրություն դարձնել նաև բնագիտական և տեխնիկական ուղղվածությամբ ուսանողների թվի աճին, ինչը ռազմավարական մեծ նշանակություն ունի: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը հնչած մտահոգության առիթով նշեց, որ 2016-2017 ուստարում ԵՊՀ բնագիտական մի քանի ֆակուլտետներում նկատվել է դիմորդների թվի զգալի աճ, ինչը դրական և հուսադրող միտում է:

Խորհրդի անդամ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր Ա. Մովսիսյանը բարձրացրեց Ավանի համալսարանական բնակելի շենքերից քարաթափման դեպքերի խնդիրը՝ նշելով, որ վերջին փուլումը եղել է խաղաիրապարակի վրա, որտեղ բարեբախտաբար այդ պահին մարդ չի եղել: Փոխնախարար Ա. Քարամյանը, ի պատասխան, ասաց, որ վերջին դեպքը եղել է 25 օր առաջ «Գլենդել Հիլզ» ՓԲԸ կողմից կառուցապատված առաջին շենքում: Խնդրի վերացման ուղղությամբ արդեն իսկ ծախսվել է 48 մլն դրամ, սակայն անհրաժեշտ են ևս շուրջ 220 մլն դրամի աշխատանքներ: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը հանձնարարեց արագ վերացնել խնդիրը:

Այնուհետև Խորհրդի անդամ, ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ Ռ. Հարությունյանը խնդրեց շարունակել լաբորատոր

վերագինման քաղաքականությունը, քանի որ այն մեծապես նպաստում է նորարարությանը և գիտական արդյունքների ստացմանը: Նախագահ Ս. Սարգսյանը հավաստիացրեց, որ ծրագիրը շարունակվելու է:

Խորհրդի անդամներ, «Սինոփսիս Հայաստան» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Հ. Մուսայելյանը և ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանը հետաքրքրվեցին Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Հասան Ռոհանիի` Հայաստանի Հանրապետություն պաշտոնական այցի արդյունքներից: Նախագահ Ս. Սարգսյանը նշեց, որ երկու երկրների միջև տնտեսական փոխհարաբերությունների որակապես նոր փուլ է սկսվել, որը տարածվում է էներգետիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, եվրասիական ընդհանուր շուկայի և այլ ոլորտներում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ծրագրի անհրաժեշտության մասին ելույթ ունեցավ Խորհրդի անդամ, ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի գիտական ղեկավար Ս. Շուքուրյանը` մատնանշելով ոլորտի առաջընթացի համար փոքր ձեռնարկություններ հիմնելու անհրաժեշտությունը: Ըստ նրա` տարածքի խնդրի պատճառով հնարավոր չէ ապահովել կենտրոնի կողմից մշակված նորարարական 3 ծրագրերի իրականացումը: Ռեկտոր Ա. Սիմոնյանը հավաստիացրեց, որ խնդիրն առաջիկայում կլուծվի:

Այլ հարցեր չհնչեցին:

Այնուհետև Նախագահ Ս. Սարգսյանը կրթության բնագավառում ներդրած նշանակալի ավանդի, մատաղ սերնդի ուսուցման և հայեցի դաստիարակության գործում ունեցած վաստակի համար «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի շքանշանով պարգևատրեց ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ղեկան, բ.գ.թ., պրոֆ. Գ. Մելիքյանին, ում 80-ամյա տարեդարձը դեկտեմբերի 14-ին հանդիսավորությամբ նշվել է Մայր բուհում: Հաճելի անակնկալից հուզված Գ. Մելիքյանը շնորհակալություն հայտնեց իր աշխատանքը գնահատելու համար և նշեց, որ, իր կարծիքով, այդ շքանշանն առաջին հերթին իր ուսուցիչներինն ու ԵՊՀ-ինն է:

Քանի որ այլ ելույթներ չհնչեցին, Նախագահ Ս. Սարգսյանն ամփոփեց Խորհրդի աշխատանքները և նիստը հայտարարեց փակված:

Խորհրդի նախագահ`

Ս. Սարգսյան

Քարտուղար`

Մ. Մալխասյան